Պայմանագիր № 000
Միջազգային Տրանսպորտային առաքման

ք .Երևան

27.08.2023թ.

Ֆիզ. Անձ «Անուն Ազգանուն», հասցե՝ Գրանցման հասցե, այսուհետ՝ Հաճախորդ կամ Պատվիրատու, որը գործում է սեփական նախաձեռնությամբ, մի կողմից, և «ՓԻ ԷՅ ԴԻ» ՍՊԸ (ապրանքանիշը՝ Կարգո Էքսպրես) հասցե՝ ՀՀ, Տափերական, Սպանդարյան 12, այսուհետ՝ Առաքող կամ Փոխադրող, ի դեմս տնօրեն Արթուր Հաբեշյանի, մյուս կողմից, կնքեցին միջազգային տրանսպորտային առաքման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Առաքողը/Փոխադրողը պարտավորվում է ներկայացվող Հայտի հիման վրա վարձատրությամբ և մյուս կողմի Հաճախորդի/Պատվիրատուի՝ բեռն առաքողի կամ բեռն ստացողի հաշվին կատարել կամ կազմակերպել Պայմանագրով կամ Հայտով որոշված բեռի փոխադրման հետ կապված ծառայություններ՝ (այսուհետ՝ Ծառայություններ)
1.2. Էլեկտրոնային փոստի/կայքի միջոցով Փոխադրողի կողմից ներկայացվող Հայտը Պատվիրատուն հաստատում է, լրացնում է իր կողմից ներկայացվող լրացուցիչ պահանջներով կամ ներկայացնում է առարկություն այն ստանալու պահից 1 (մեկ) օրվա ընթացքում: Եթե սույն կետում նշված ժամկետում Հայտը չի հաստատվում կամ չի ներկայացվում առարկություն, ապա Հայտը համարվում է ընդունված և Փոխադրողը պարտավոր է Հայտում ներկայացված պայմաններով իրականացնել փոխադրում: Հայտում ներառվում են կոնկրետ բեռի անվան, երթուղու, ինչպես նաև Պայմանագրով չկարգավորվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկություններ:
1.3.Սույն Պայմանագրով նշանակման վայր է, այսուհետ՝ «Վայր», համարվում Պատվիրատուի կողմից նշված վայրը, որոնք ամրագրված են ՝ սույն Պայմանագրին կից Հայտում և բեռի տվյալ խմբաքանակի համար ապրանքն ուղեկցող այլ փաստաթղթերում:
1.4. Բեռի ստացման համար լիազորված անձ է, այսուհետ՝ «Ստացող», հանդիսանում բեռը ստացողի ներկայացուցիչը: Ստացողի լիազորությունները հաստատվում են Փոխադրողին ներկայացվող հետևյալ փաստաթղթերով
- անձնագիր և լիազորագիր

2. Բեռնափոխադրման ծառայության արժեքը և վճարման կարգը

2.1. Տրանսպորտի միջոցով յուրաքանչյուր փոխադրման դեպքում փոխադրման ծառայության արժեքը սահմանվում է Պայմանագրին կից Հայտում:
2.2. Ծառայության արժեքի վճարումը Պատվիրատուի կողմից կատարվում է փոխանցմամբ՝ Փոխադրողի կողմից Պատվիրատուին տրամադրած հաշվին՝ բեռնափոխադրումը կատարելուց հետո 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում բեռը ստանալուց առաջ կամ Հայտով սահմանված կարգով՝ փոխադրողի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրի հիման վրա կամ կանխիկ եղանակով՝ օրենքով սահմանված կարգով:
2.3. Պատվիրատուի կողմից Փոխադրողի ծառայությունների դիմաց վճարումը պայմանավորված ժամկետից ուշացնելու դեպքում, Փոխադրողը իրավունք ունի Պատվիրատուից պահանջել տույժ յուրաքանչյուր ուշացած օրվա համար մատուցած ծառայության արժեքի 0,3%-ի չափով:
2.4. Փոխադրողի կողմից ծառայության համար առաջարկվող գումարն իր մեջ չի պարունակում բանկային փոխանցման ծառայությունների համար պահանջվող ծախսերը:

3. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

3.1. Փոխադրողը պարտավոր է՝
3.1.1.Բեռնման համար տրամադրել տեխնիկապես սարքին և սանիտարական պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոց, պատվիրատուից հայտի ստացման պահից ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում:
3.1.2. Անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին ճանապարհին ուշացման, վթարների դեպքերի և բեռի՝ ժամանակին հասցնելուն խոչընդոտող այլ չնախատեսված հանգամանքների վերաբերյալ:
3.2. Պատվիրատուն պարտավոր է.
3.2.1. Ապահովել բեռի պատշաճ փաթեթավորումը, համարակալումը, նրա տեղաբաշխումը և ամրացումը բեռնային բաժանմունքներում՝ ըստ ընդունված նորմերի, որոնք բացառում են ինչպես բեռի, այնպես էլ տրանսպորտային միջոցի վնասման հնարավորությունը:
3.2.2. Իր ուժերով և իր հաշվին իրականացնել բեռնումը-բեռնաթափումը մաքսային ձևակերպումը և բեռների մաքսային զննումը (մաքսայնացումը և մաքսազերծումը)՝ փոխանցման վայր Փոխադրողի կողմից տրանսպորտային միջոցի տրամադրման պահից 1 ժամվա ընթացքում:
3.2.3. Փոխադրողին հանձնել միայն բեռի կոմերցիոն հաշիվ ապրանքագրում ներկայացված ապրանքները, որոնք պետք է լինեն թույլատրելի փոխադրման համար և չպետք է պարունակեն տեղափոխման համար արգելված ապրանքների ցանկից որևէ մեկը, հակառակ դեպքում ծագած խնդիրների և առաջացած ծախսերի ողջ պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն:
3.2.4. Փոխադրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը՝
-բեռնամաքսային հայտարարագիր
-կոմերցիոն հաշիվ-ապրանքագրեր (invoice)
-CMR ավտոտրանսպորտային վերադիրներ
-ապրանքի ծագման հավաստագիր
3.2.5. Վճարել բեռնափոխադրման ծառայության արժեքը սույն Պայմանագրի 2.2 կետով և համապատասխան Հայտում նշված պայմաններով:
3.3. Յուրաքանչյուր փոխադրման դեպքում Փոխադրողի պարտականությունները համարվում են կատարված՝ Պատվիրատուի CMR ավտոտրանսպորտային վերադիրների պատճենների փոխանցումից հետո, որոնք պարտադիր կերպով հաստատված են բեռի ընդունում-հանձնումը հաստատող Ստացողի ստորագրությամբ և/կամ կնիքով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը կրում են նյութական պատասխանատվություն սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:
4.2. Փոխադրողը պատասխանատվություն է կրում բեռի կամ ուղեբեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար, որը տեղի է ունեցել այն փոխադրման համար ընդունելուց հետո մինչև բեռն ստացողին, նրա լիազորած անձին կամ ուղեբեռն ստանալու համար լիազորված անձին հանձնելը, եթե չի ապացուցում, որ բեռի կամ ուղեբեռի կորուստը, պակասորդը, վնասվածքը տեղի են ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնք փոխադրողը չէր կարող կանխել, և որոնց վերացնելը իրենից կախված չէր:
4.3. Եթե Պատվիրատուն չի ապահովագրում բեռը, Բեռնափոխադրողը վնասված բեռի փոխհատուցումը իրականացնում է ըստ 4.2 կետի կամ տվյալ բեռնափոխադրմանն առնչվող CMR ապահովագրության շրջանակներում (եթե այդպիսին առկա է):
4.4. Պատվիրատուն պատասխանատու է բեռի համար անհրաժեշտ տարաների և ոչ պատշաճ փաթեթավորման հետևանքով առաջացած բոլոր վնասների համար:
4.5. Փոխադրողի կողմից փոխադրամիջոցը պայմանավորված ամսաթվից 48 ժամից ավել ուշ տրամադրելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի ամեն ուշացած օրվա համար տուգանք պահանջել Հայտով սահմանված չափով և կարգով:
4.6. Պատվիրատուի կողմից փոխադրամիջոցը 48 ժամից ավել ուշ բեռնաթափելու դեպքում

Փոխադրողն իրավունք ունի տուգանք պահանջել Հայտով սահմանված չափով և կարգով:
4.7. Եթե Պատվիրատուն չի բեռնաթափում/ընդունում բեռը այն Փոխադրողի պահեստ/մաքսային պահեստ հասնելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, Փոխադրողն իրավունք ունի հանձնել իր տրամադրության տակ գտնվող պահեստ պահատվության կամ հանձնել բեռը մաքսային պահեստ և գանձել Պատվիրատուից պահատվության ծախսերը նախքան բեռը Պատվիրատուին հանձնելը: Եթե Պատվիրատուն չի ընդունում բեռը 30 օրվա ընթացքում, Փոխադրողը իրավունք ունի տնօրինել բեռը ըստ իր հայեցողության կամ Պատվիրատուի հաշվին վերադարձնել այն բեռն ուղարկողին՝ տեղեկացնելով այդ մասին Պատվիրատուին:
4.8.Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Պայմանագրի 3.2.2. կետում նշված տեղեկատվությունը տրամադրելու հետ կապված իր պարտականության խախտմամբ Առաքողին/Փոխադրողին պատճառված վնասների համար:
4.9. Լաստանավային փոխադրման հետ կապված կամ լաստանավի կործանման հետևանքով բեռի ուշացման դեպքում Բեռնափոխադրողը նյութական պատասխանատվություն չի կրում:
4.10. Սույն Պայմանագրով չկարգավորված մնացած այլ դեպքերում, ներառյալ կողմերի պատասխանատվությունը, կիրառվում են ՀՀ գործող օրենսդրության նորմերը:

5. Ֆորս մաժոր

Կողմերից ոչ մեկը չի կրում պատասխանատվություն սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարման համար, եթե դա տեղի է ունենում անհաղթահարելի ուժի առաջացման պայմաններում (ֆորս-մաժոր), որը ի հայտ է եկել Պայմանագիրը կնքելուց հետո: Ըստ Կողմերի, անհաղթահարելի ուժ է համարվում. ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը և այլ տարերային աղետները, պատերազմը, ռազմական գործողությունները, կառավարության որոշումները և գործողությունները, ինչպես նաև իրավիճակները, որոնք կախված չեն Կողմերի կամքից և անմիջական ազդեցություն ունեն Կողմերի՝ Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման վրա:
Եթե այդ հանգամանքները կշարունակվեն ավելի քան 60 օր, Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի հրաժարվել սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումից, ընդ որում կողմերից ոչ մեկը իրավունք չի ունենա պահանջել մյուս Կողմից հնարավոր վնասների փոխատուցում:
Ֆորս-մաժորային իրավիճակի և դրա շարունակականության մասին պատշաճ ապացույց կծառայեն ՀՀ Առևտրա-Արդյունաբերական Պալատի կողմից տրվող տեղեկանքները:

6. Վեճերը լուծելու կարգը

6.1. Պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, վիճելի հարցեր ծագելու դեպքում, կողմերը կձեռնարկեն բոլոր միջոցները դրանք բանակցությունների միջոցով լուծելու համար:
6.2. Կողմերի միջև համաձայնության չլինելու դեպքում, վեճերը ենթակա են լուծման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Այլ դրույթներ

7.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև 2025 թվականի ավարտը: Պայմանագիրը համարվում է երկարաձգված յուրաքանչյուր օրացույցային տարով, եթե կողմերից որևէ մեկը պայմանագրի ժամկետի ավարտից առաջ 30 օրվա ընթացքում գրավոր կերպով չի ծանուցում մյուս կողմին Պայմանագիրը ուժը կորցրած ճանաչելու մասին:
7.2. Պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերից մեկը հայտնի այդ մասին գրավոր ոչ ուշ քան 30 օր առաջ մինչև պայմանագիրը լուծելը:
7.3.Պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում հրաժարվող կողմը մյուս կողմին

հատուցում է պայմանագրի լուծմամբ առաջացած վնասները:
7.4.Պայմանագրին վերաբերվող բոլոր փոփոխությունները և լրացումները գործում են, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են յուրաքանչյուր կողմի լիազորված անձանց կողմից:
7.5.Սույն պայմանագիրը կնքելու պահից բոլոր նախապես կամ միաժամանակ բանավոր և գրավոր պարտականությունները և խոստումները իրական չեն, եթե դրանք հակասում են սույն պայմանագրին:
7.6.Սույն Պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս, եթե օրենքով նման պայմանագրի ձևի վերաբերյալ այլ պահանջ սահմանված չէ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:
7.7.Պայմանագրի բոլոր փոփոխությունները, լրացումները և մասնագրերը, որոնք ուղարկվում են կողմերին ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային փոստի միջոցով, ունեն բնօրինակի ուժ, եթե դրանք ստորագրված են երկուկողմերի լիազորված անձանց կողմից:
7.8. Սույն Պայմանագիրը բաղկացած է 3 (երեք) էջից և ստորագրված է 2 (երկու) օրինակից: Երկու օրինակներն էլ նույնական են և ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի մոտ առկա է Պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի իրավաբանական հասցեներն ու այլ վավերապայմաններ

Առաքող/Փոխադրող

«Փի Էյ Դի» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Տավերական, Սպանդարյան 12

Բանկային հաշիվ
ACBA-CREDIT AGRICOLE BANK
SWIFT code: AGCAAM22
Beneficiary name: P A D LLC
Beneficiary account number (IBAN) : 220553330121000 AMD

ՀՎՀՀ՝ 04225373

Տնօրեն
Ա.Հարությունյան

Հաճախորդ/Պատվիրատու
Ֆիզ Անձ «Անուն Ազգանուն»
Անձնագիր Անձնագրի սերիա, համար
Հասցե՝ Գրանցման հասցե

Ֆիզ Անձ
Անուն Ազգանուն